ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻՆ ԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ընտրողների կողմից դեպուտատներին ետ կանչելու իրավունքը սոցիալիստական ներկայացուցչական համակարգի կարևորագույն դրույթներից մեկն է։ «Որևէ ընտրական հաստատություն,— նշել է Վ. Ի. Լենինը,— կամ ներկայացուցիչների ժողով իսկական դեմոկրատական և իրոք ժողովրդի կամքը ներկայացնող կարող է համարվել այն դեպքում միայն, երբ ճանաչվում և գործադրվում է ընտրողների կողմից իրենց ընտրածներին ետ կանչելու իրավունքը»[1]։ Վ. Ի. Լենինը սովետների իսկական ժողովրդական իմաստը տեսնում էր նաև նրանում, որ յուրաքանչյուր ընտրող իր ներկայացուցչին կարող է ետ կանչել[2]։

Սոցիալիստական երկրներում դեպուտատներին ետ կանչելու իրավունքի ամրապնդումն ու կենսագործումը բխում է պատմության մեջ ժողովրդական զանգվածների վճռական, որոշիչ դերի մասին մարքս-լենինյան ուսմունքից։

Բուրժուական պետություններում ընտրողները, որպես կանոն, իրավունք չունեն իրենց վստահությունը կորցրած դեպուտատներին ետ կանչել։ Վ. Ի. Լենինի դիպուկ արտահայտությամբ՝ չնայած «ժողովուրդն իրավունք ունի երկու տարին մեկ անգամ ձայն տալու, բայց հաճախ այնպես է դուրս գալիս, որ ժողովրդի ձայնով անցել են նրանք, ովքեր օգնում են ճնշելու հենց նրանց»[3]։ Դեպուտատներին ետ կանչելու իրավունքի ժխտումը ժողովրդական ներկայացուցչության բուրժուական տեսության կարևոր դրույթներից մեկն է։ Համաձայն այդ տեսության, դեպուտատը պետք է գործի ընդհանուրի՝ ամբողջ պետության բարօրության շահերից ելնելով։ Ուստի նա պետք է աղատ լինի որևէ ազդեցությունից և չկաշկանդվի իմպերատիվ (պարտադիր) մանդատով։ Նշված դրույթը, որն ընդհանուր ձևով իր ամրապնդումն ստացել է դեռևս 1791 թ.՝ ֆրանսիական սահմանադրությունում[4], այսօր էլ բուրժուական դեմոկրատիայի պահանջն է, որ արտացոլված է բազմաթիվ բուրժուական երկրների սահմանադրություններում։ Այսպես, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության սահմանադրության 38-րդ հոդվածն ուղղակի ասում է. «Դեպուտատները ամբողջ ժողովրդի ներկայացուցիչներն են, կաշկանդված չեն պատգամներով կամ հանձնարարություններով և ենթարկվում են միայն իրենց խղճին»[5]։

Դեպուտատը, պնդում են բուրժուական պետական իրավունքի տեսաբանները, ամբողջ ժողովրդի ներկայացուցիչն է։ Հետևաբար, նրան կարող է ետ կանչել ամբողջ ժողովուրդը և ոչ թե նրա ընտրական օկրուգի ընտրողները[6]։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 409։

2 Նույն տեղում, էջ 412։

3 Նույն տեղում, էջ 411։

4 Конституции и законодательные акты буржуазных государств 17—19 вв., 1957, стр. 258.

5 Конституции буржуазных государств Европы, 1957, стр. 836.

6 Эсмен, Общие основания конституционного права, СПб., 1898, стр. 152—153, 223—226.

Ըստ անգլիացի տեսաբաններ Ուեյդի և Ֆիլլիպսի «պառլամենտի անդամներն ամբողջ ազգի ներկայացուցիչներն են և ոչ թե պարզապես պատգամավորներ», ուստի «օկրուգի ընտրողները չունեն ոչ իրավական և ոչ էլ բարոյական իրավունք ետ կանչելու իրենց ընտրած պառլամենտի անդամին»[7]։

Արտահայտելով տիրապետող դասակարգի շահերն ու կամքը, որոշ բուրժուական գիտնականներ պնդում են, որ դեպուտատը «պետք է հետևի բացառապես իր բանականության և խղճի թելադրանքին», որ նա «չպետք է ընկնի իր ընտրողների այս կամ այն հրահանգի հնարավոր ազդեցության տակ»[8]։

Պետք է նշել, որ որոշ բուրժուական երկրներում հեղափոխական-դեմոկրատական ուժերին հաջողվել է հասնել ընտրողների՝ դեպուտատին ետ կանչելու իրավունքի օրենսդրական ամրապնդմանը, բայց, որպես կանոն, այն տարածվում է միայն տեղական մարմինների դեպուտատների վրա։ Եզակի դեպքերում աշխատավոր զանգվածներին հաջողվել է բարձրագույն ներկայացուցչական մարմինների դեպուտատներին ետ կանչելու իրավունք նվաճել[9]։ Սակայն այդ իրավունքը ձևական է, որովհետև սահմանված է դեպուտատին ետ կանչելու գործնականում անիրագործելի կարգ։ Այսպես, օրինակ, Շվեյցարիայի որոշ կանտոնների սահմանադրությունների համաձայն ընտրողները կարող են ետ կանչել միաժամանակ միայն կանտոնի ներկայացուցչական մարմնի ամբողջ կազմը։ Դրա համար պահանջվում է տվյալ կանտոնի մի քանի հազար ընտրողների ստորագրությամբ հանրագիր ներկայացնել, որից հետո պետք է անցկացվի համաժողովրդական քվեարկություն՝ ներկայացուցչական մարմինը ցրելու համար։ Պատահական չէ, որ Շվեյցարիայում դեպուտատներին ետ կանչելու իրավունքն առհասարակ չի կենսագործվում[10]։ Ետ կանչելու իրավունք հռչակեց նաև Ճապոնիայի սահմանադրությունը (1947 թ.), սակայն երկրի հետադիմական շրջանները հնարավորություն չեն տալիս կյանքում իրագործել այդ դրույթը և այն մնում է լոկ որպես դեկլարացիա[11]։

Դեպուտատներին ետ կանչելու իսկական իրավունք առաջին անգամ մտցրեց Փարիզի կոմունան, որը սահմանեց Փարիզի քաղաքային ձայն ունեցողների իմպերատիվ մանդատ, ըստ որի դեպուտատը պատասխանատու է ընտրողների առաջ և կարող է փոփոխվել[12]։

Ուսումնասիրելով Փարիզի կոմունայի փորձը, Վ. Ի. Լենինը ընդգծեց կոմունայի այնպիսի միջոցառումների հսկայական նշանակությունը, ինչպիսիք են «առանց բացառության բոլոր պաշտոնատար անձերի լիակատար ընտրովիությունը, ամեն ժամանակ փոփոխելիությունը»[13]։ Վ. Ի. Լենինը կուսակցության առաջ խնդիր էր դնում պայքարել «պրոլետարական-գյուղացիական ավելի դեմոկրատիկ ռեսպուբլիկայի համար, որի մեջ ... բոլոր պաշտոնատար

---

7 Уэйд и Филлипс, Конституционное право, М., 1950, стр. 120.

8 Марсель Прело, Конституционное право Франции, М., 1957, стр. 453.

9 Այս հանգամանքը սովետական որոշ հեղինակներ նկատի չեն ունենում սխալմամբ պնդելով, թե ետ կանչելու իրավունքը ընդհանրապես անծանոթ է բուրժուական սահմանադրություններին (տե՛ս օրինակ, К. Д. Мухамедшин, Верховный Совет Казахской ССР, Организация и деятельность, Алма-Ата, 1963, стр. 258).

10 Տե՛ս В. Ф. Коток, Советская представительная система, М., 1963, стр. 48—49.

11 Տե՛ս Н. А. Латышев, Государственный строй Японии, М., 1956, стр. 70.

12 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1950, էջ 633։

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 544։

անձերը դառնում են ոչ միայն ընտրովի, այլև ամեն ժամանակ փոփոխելի՝ ըստ նրանց ընտրողների մեծամասնության պահանջի»[14]։

Հատկանշական է, որ դեպուտատներին ետ կանչելու իրավունքն առաջացավ սովետների հետ միասին։ Դեռևս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից առաջ բանվորների, գյուղացիների և զինվորների դեպուտատների շատ սովետներ իրենց կանոնադրություններում ամրապնդեցին դեպուտատներին ետ կանչելու իրավունքը։ Օրինակ, Տվերի բանվորական դեպուտատների սովետի 1905 թ. նոյեմբերի 18-ի կանոնադրությունը սահմանում էր, որ եթե դեպուտատը չի արդարացնում ընտրողների վստահությունը, նրանք այդ մասին տեղեկացնում են բանվորական դեպուտատների ժողովին, որը պարտավոր է անցկացնել նոր ընտրություններ[15]։

Ընտրողների՝ դեպուտատների ետ կանչելու իրավունքն ամրապնդող առաջին սովետական օրենքը 1917 թ. դեկտեմբերի 4-ի ՀԿԳԿ դեկրետն էր՝ «Ետ կանչելու իրավունքի մասին», որի նախագիծը կազմել էր Վ. Ի. Լենինը[16]։

Ետ կանչելու իրավունքն առաջին անգամ սահմանադրական ամրապնդում ստացավ 1918 թ. ՌՍՖՍՀ սահմանադրության 78-րդ հոդվածով. «Ընտրողները իրավունք ունեն ամեն ժամանակ ետ կանչելու խորհրդից իրենց ընտրած պատգամավորին և համաձայն ընդհանուր կանոնադրության ընտրել նոր պատգամավոր»[17]։

Սովետական առաջին սահմանադրության այս կարևորագույն գրույթն իր ամրապնդումը ստացավ նաև ՌԿ(բ)Կ ծրագրում[18], որն ընդունվեց կուսակցության 7-րդ համագումարում՝ 1919 թ.։

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունում ետ կանչելու իրավունքն առաջին անգամ օրենսդրականորեն ամրապնդվեց ՀՍԽՀ 1922 թ. փետրվարի 3-ին ընդունված սահմանադրությամբ, որի 84-րդ հոդվածի համաձայն ընտրողներն իրավունք ունեն ետ կանչելու իրենց ընտրած պատգամավորին և կատարելու նոր ընտրությունները ընդհանուր կանոնների համաձայն[19]։

Սովետական Հայաստանի առաջին սահմանադրությունը հատուկ գլուխ է հատկացրել (7-րդ) խորհուրդների և խորհուրդների համագումարների պատգամավորների և գործադիր կոմիտեների անդամների պարտականություններին։ ՀՍԽՀ սահմանադրության 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածները սահմանեցին պատգամավորների կոնկրետ պարտականությունները և նրանց լիազորություններից զրկելու և ետ կանչելու հիմքերը[20]։ Սահմանվեց, որ իրենց պարտականությունները չկատարելու դեպքում պատգամավորները «բացի ընդհանուր և կարգապահական պատասխանատվությունից, միաժամանակ, զրկ-

---

14 Նույնը, հ. 24, էջ 582։

15 «1905 год в Тверской губернии», Тверь, 1925, стр. 240; А. А. Безуглов, Избиратели и депутаты страны советов, М., 1968, стр. 29.

16 Сборник официальных документов по советскому государственному праву, М., 1964, стр. 346—347.

17 Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության սահմանադրությունը (հիմնական օրենքը), Մոսկվա, 1918։

18 ՍՄԿՊ-ն ...բանաձևերում ու որոշումներում, մ. 1, Երևան, 1954, էջ 525։

19 Տե՛ս ՀՍԽՀ սահմանադրությունը (հիմնական օրենք), Երևան, 1922։

20 Տե՛ս А. З. Бегиян, Образование и упрочение суверенного советского армянского государства, изд.-во АН Арм. ССР, Ереван, 1962, стр. 242—243.

վում են իրենց լիազորություններից»։ ՀՍԽՀ 1926 թ. սահմանադրությունը նույնպես ամրապնդեց ընտրողների կողմից դեպուտատներին ետ կանչելու իրավունքը՝ նշելով, որ «խորհրդի պատգամավոր ընտրողներն իրավունք ունեն ամեն ժամանակ ետ կանչելու նրան և նոր ընտրություն կատարելու»[21]։ Սակայն սահմանադրությունից ամբողջովին դուրս մնաց նախորդի 7-րդ գլուխը, որով ՀՍԽՀ 1922 թ. սահմանադրությունը նպաստավոր կերպով տարբերվում էր մյուս միութենական հանրապետությունների սահմանադրություններից։ Ճիշտ է, դեպուտատների պարտականություններին վերաբերող հարցերը կարգավորվեցին ընդունված կանոնադրություններում[22], սակայն այդ նորմատիվ ակտերում ոչինչ չի ասված դեպուտատներին ետ կանչելու մասին։

1927 թ. նոյեմբերի 26-ին ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահությունը հատուկ անդրադարձավ ընտրողների կողմից դեպուտատներին ետ կանչելու հարցին և հանձնարարեց միութենական հանրապետությունների կենտգործկոմներին մշակել և կյանքում կենսագործել դեպուտատներին ետ կանչելու վերաբերյալ որոշումներ, միաժամանակ սահմանելով, որ դրա համար հիմք կարող են ծառայել՝ 1) սովետի, նրա սեկցիաների և հանձնաժողովների նիստերին սիստեմատիկաբար չհաճախելը, 2) սովետի հանձնարարությունները կատարելուց հրաժարվելը, 3) ընտրողների պատգամները չկատարելը, 4) սովետի անդամի համար անթույլատրելի վարքագիծը[23]։

ՍՍՀՄ Կենտգործկոմի այս ցուցումները իրենց արտահայտությունը գտան ՀՍԽՀ 5-րդ գումարման Կենտգործկոմի 3-րդ նստաշրջանի՝ 1928 թ. հուլիսի 7-ին հաստատած կանոնադրություններում[24]։

Ընտրողների կողմից դեպուտատներին ետ կանչելու իրավունքը լայնորեն օգտագործելու հարցում կարևոր նշանակություն ունեցավ համամիութենական 16-րդ կուսակցական կոնֆերանսը (ապրիլ, 1929), որը պահանջեց, «հետևել, որ իրոք պահպանվի ընտրողների ժողովների կողմից ամեն մի ընտրովի անձի ետ կանչելու իրավունքը, որի աշխատանքի ստուգումը հաստատել է, որ այդ անձը պիտանի չէ ընտրողների կողմից իրեն հանձնարարված աշխատանքը կատարելու համար»[25]։

Մեր երկրում սոցիալիզմի հաղթանակը պայմաններ ու հնարավորություններ ստեղծեց փոփոխություններ մտցնել ընտրական համակարգում։ Սովետների բոլոր օղակների ուղղակի ընտրություններով ամրապնդվեց դեպուտատների և ընտրողների կապը, պայմաններ ստեղծվեց պետական իշխանության բոլոր մարմինների գործունեության նկատմամբ ժողովրդական վերահսկողություն իրականացնելու համար։

Հայկական ՍՍՀ 1937 թ. սահմանադրությունը ՍՍՀՄ 1936 թ. սահմանադրության 142-րդ հոդվածին համապատասխան սահմանեց. «Յուրաքանչյուր դեպուտատ պարտավոր է ընտրողների առաջ հաշիվ տալ իր աշխատանքի և

---

21 ՀՍԽՀ սահմանադրության (Հիմնական օրենք), Երևան, 1926։

22 Տե՛ս ՍԽՀՄ բանվորա-գյուղացիական կառավարության օրենքների և կարգադրությունների ժողովածու, հրատարակություն ՀՍԽՀ արդարադատության ժողովրդական կոմիսարիատի, 1925 թ. սեպտեմբեր, № 9։

23 Տե՛ս ЦГАОР, Ф. 3316, оп. 13, д. 6, Л. 335; см. К. Г. Федоров, Союзные органы власти (1922—1962 гг.), М., 1963, стр. 84.

24 Տե՛ս ՀՍԽՀ բանվորա-գյուղացիական կառավարության օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1928, № 10։

25 ՍՄԿՊ-ն...բանաձևերում ու որոշումներում, մ. 2, Երևան, 1955, էջ 750։

աշխատավորների դեպուտատների սովետի աշխատանքի մասին և կարող է ամեն ժամանակ ետ կանչվել ընտրողների մեծամասնության որոշմամբ, օրենքով սահմանված կարգով»։ Սակայն երկար ժամանակ դեպուտատներին ետ կանչելու իրավունքի իրականացման կարգը օրենսդրականորեն չէր սահմանված։ Այդ հանգամանքը բացասական ազդեցություն ունեցավ ետ կանչելու իրավունքի զարգացման և կիրառման վրա։ ՍՄԿԿ XX համագումարը անդրադառնալով այս հարցին նշեց, որ անհրաժեշտ է օրենք ընդունել ընտրողների կողմից դեպուտատներին ետ կանչելու կարգի մասին[26]։ Ելնելով ՍՄԿԿ ցուցումներից, ՍՍՀՄ Գերագույն սովետը 1959 թ. հոկտեմբերի 30-ին օրենք ընդունեց «ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատին ետ կանչելու կարգի մասին»[27]։ Շուտով նման օրենքներ ընդունվեցին նաև միութենական և ինքնավար հանրապետություններում։ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը 1959 թ. նոյեմբերի 19-ին օրենք ընդունեց «Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատին ետ կանչելու կարգի մասին»[28], իսկ Գերագույն սովետի հաջորդ նստաշրջանում օրենք ընդունվեց տեղական սովետների դեպուտատներին ետ կանչելու կարգի մասին[29]։

Դեպուտատներին ետ կանչելու կարգի մասին օրենքները սահմանում են, որ համապատասխան ընտրական օկրուգի ընտրողների մեծամասնության որոշմամբ դեպուտատն ամեն ժամանակ կարող է ետ կանչվել, եթե նա չի արդարացրել ընտրողների վստահությունը կամ կատարել է դեպուտատի բարձր կոչմանն անվայել գործողություններ։ Ըստ որում, ետ կանչման հարցի հարուցման իրավունքը վերապահվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատության թեկնածու առաջադրելու իրավունքով օժտված սուբյեկտներին[30]։ Սկզբունքային նշանակություն ունի դեպուտատին ետ կանչելու մասին օրենքի այն դրույթը, որ դեպուտատին ետ կանչելու հարց հարուցող հասարակական կազմակերպությունները այդ մասին հաղորդում են դեպուտատին՝ շարադրելով ետ կանչելու հարցադրման նկատառումները։ Օրենսդիրը դեպուտատին իրավունք է վերապահում հասարակական կազմակերպություններին կամ աշխատավորների ժողովներին բանավոր կամ գրավոր պարզաբանումներ ներկայացնել այն հանգամանքների վերաբերյալ, որոնք իրեն ետ կանչելու հարցադրման հիմք են ծառայել։ Դեպուտատին դեպուտատական մանդատից զրկելը ծայրահեղ միջոցառում է, ուստի ետ կանչելու մասին օրենքի վերը նշված դրույթն անհրաժեշտ երաշխիքներ է պարունակում պատահականություններից և սխալներից խուսափելու համար։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը դեպուտատին ետ կանչելու վերաբերյալ նյութերը քննելուց առաջ դրանք ուղարկում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի մանդատային հանձնաժողովին։ Վերջինս պարտավոր է նախնական քննությունից հետո տալ հիմնավորված եզրակացություններ։

---

26 XX съезд КПСС, стенографический отчет, т. 1, М., 1956, стр. 92.

27 Сборник Законов СССР, 1938—1967, т. 1, стр. 241—243.

28 Տե՛ս Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նիստերը, երկրորդ սեսիա, սղագրական հաշվետվություն, Երևան, 1960, էջ 339—342։

29 Տե՛ս Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նիստերը, երրորդ սեսիա, սղագրական հաշվետվություն, Երևան, 1960, էջ 199—202։

30 Տե՛ս Հայկական ՍՍՀ Սահմանադրություն (Հիմնական օրենք), Երևան, 1967, հոդ. 117, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի ընտրությունների կանոնադրություն, Երևան, 1963, հոդ. հոդ. 48, 49։

Հարցի նախապատրաստման նման ձևը դեպուտատին ետ կանչելու հարցում սխալ թույլ չտալու լավագույն երաշխիք է[31]։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատին ետ կանչելու առնչությամբ քվեարկություն անցկացնելու մասին որոշում ընդունելուց հետո հասարակական կազմակերպությունները և առանձին քաղաքացիներ իրավունք ունեն անարգել ագիտացիա մղել դեպուտատին ետ կանչելու օգտին կամ ետ կանչելու դեմ։

Դեպուտատին ետ կանչելու հարցը քննարկվում և լուծվում է համապատասխան ընտրական օկրուգի ընտրողների ժողովներում՝ ըստ ձեռնարկությունների, հիմնարկների, կոլտնտեսությունների, զորամասերի, ինչպես նաև ըստ ընտրողների բնակավայրի։ Ետ կանչելու հարցի վերաբերյալ որոշումը ընդունվում է բաց քվեարկությամբ։ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատին ետ կանչելու վերաբերյալ օրենքի կատարմանը հետևելու, քվեարկության արդյունքները որոշելու, քվեարկությունը անցկացնելիս թույլ տված խախտումների կապակցությամբ բողոքները քննարկելու համար կազմվում է օկրուգային հանձնաժողով, որը և պարզում է դեպուտատին ետ կանչելու քվեարկության արդյունքները՝ ընտրողների ընդհանուր ժողովների արձանագրությունների հիման վրա։

Դեպուտատներին ետ կանչելու նոր կարգը սահմանող օրենքների ընդունումը զգալիորեն նպաստել է մեր երկրում ինչպես ներկայացուցչական, այնպես էլ անմիջական դեմոկրատիայի հետագա զարգացմանը, աշխուժացել է ժողովրդական ներկայացուցիչների գործունեությունը, բարձրացել նրանց պատասխանատվությունը ընտրողների առաջ։ Դեպուտատին ետ կանչելու ինստիտուտը սովետական ժողովրդի լիիշխանության արտահայտությունն է, սովետական պետության ներկայացուցչական մարմինների և դեպուտատների գործունեության նկատմամբ ժողովրդական վերահսկողության ռեալ երաշխիքը։ Բավական է նշել, որ միայն 1965 թ. սովետների բոլոր օղակների կազմից ետ են կանչվել ավելի քան 350 դեպուտատներ[32], իսկ 1966 թ.՝ 498 դեպուտատներ[33]։ ՍՍՀՄ 5-րդ և 6-րդ գումարումների Գերագույն սովետի կազմից ետ են կանչվել ընտրողների վստահությունը չարդարացրած, դեպուտատի կոչման բարձրության վրա չգտնված 10 դեպուտատներ[34]։ Ինչպես տեսնում ենք դեպուտատներին ետ կանչելու դեպքերը եզակի են, իսկ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի այս կամ այն դեպուտատին ընտրողների կողմից ետ կանչելու օրինակներ չկան։

Մեր կարծիքով, անհրաժեշտ է որոշ չափով կոնկրետացնել դեպուտատին ետ կանչելու հիմքերը։ Մասնավորապես հարկավոր է թվարկել դեպուտատին ետ կանչելու որոշ հիմնական շարժառիթներ՝ ինչպես դա արված էր սովետական պետության զարգացման առաջին էտապում գործող որոշ օրենսդրական

---

31 1968 թ. հունիսի 21-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների պալատի մանդատային հանձնաժողովը քննարկեց աշխատավորների կոլեկտիվների ներկայացրած նյութերը՝ Ազգությունների սովետի դեպուտատ Աշուր Հայդարովին (Ուզբեկական ՍՍՀ, Ջարտակի № 101 ընտրական օկրուգ) ետ կանչելու մասին։ Այդ հարցի կապակցությամբ հանձնաժողովի եզրակացությունը ներկայացվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը։

32 См. Н. В. Подгорный, Выступление на XXIII съезде КПСС, XXIII съезд КПСС, стенографический отчет, т. I, М., 1966, стр. 234.

33 См. Основы советского строительства, М., 1968, стр. 61.

34 См. Верховный Совет СССР, М., 1968, стр. 61.

ակտերում[35]։ Թվում է, որ նման շարժառիթների թվին պետք է դասել ընտրողների պատգամներ չկատարելը, սովետի, մշտական հանձնաժողովների աշխատանքներին սիստեմատիկաբար չմասնակցելը, ընտրողների առջև հաշվետվություններով հանդես չգալը, աշխատանքում իրեն չարդարացնելը և այլն։ Ավելի ճիշտ կլիներ դեպուտատներին ետ կանչելու հարցադրման սուբյեկտներ ճանաչել տվյալ ընտրական օկրուգի ընտրողներին և նրանց ժողովների որոշումները իրավաբանական հիմք համարել դեպուտատին ետ կանչելու առնչությամբ քվեարկություն նշանակելու համար։ Հարցի նման լուծումը առավել տրամաբանական կլինի, որովհետև ընտրողներն են դեպուտատներին օժտում ժողովրդական ներկայացուցչի լիազորություններով ու վերահսկում նրանց գործունեությունը։ Հենց այս իմաստով է արծարծում խնդիրն Ա. Ա. Բեզուգլովը, երբ առաջարկում է դեպուտատի հաշվետվությունը քննարկող ընտրողների ժողովին իրավունք վերապահել հարց հարուցել իրենց վստահությունը չարդարացնող դեպուտատին ետ կանչելու մասին[36]։ Ինչ վերաբերում է հասարակական կազմակերպություններին, ապա նրանց պետք է իրավունք վերապահել միայն դիմելու ընտրողներին՝ դեպուտատին ետ կանչելու հարցում նախաձեռնություն ցուցաբերելու մասին[37]։

Ըստ որում նպատակահարմար կլիներ, եթե ընտրողների ժողովների որոշումը Գերագույն սովետի նախագահությունը քննարկեր միայն այն դեպքում, երբ բոլոր ժողովներին մասնակցել է տվյալ օկրուգի ընտրողների ոչ պակաս մեկ երրորդը։ Գերագույն սովետի դեպուտատին ետ կանչելու մասին օրենքում թերևս հարկէ նաև նշել, որ եթե Գերագույն սովետի նախագահությունը դեպուտատին ետ կանչելու քվեարկություն չի նշանակում, ապա այդ մասին ընտրողներին պետք է պաշտոնապես հայտնվի։

Դեպուտատին ետ կանչելու հարցի որոշումը՝ քվեարկությունը մեր կարծիքով պետք է անցկացվի ըստ ընտրողների բնակավայրի՝ ընտրական հանձնաժողովների և ոչ թե հասարակական կազմակերպությունների միջոցով, ինչպես նախատեսված է գործող օրենսդրությամբ։ Ճիշտ կլիներ նաև դեպուտատին ետ կանչելու վերաբերյալ քվեարկությունը կատարել գաղտնի և ընտրողների ներկայացուցիչներին իրավունք վերապահել ներկա գտնվել ձայների հաշվարկմանը։

Դեպուտատին պետք է ետ կանչված համարել այն դեպքում, երբ ընտրողների մեծամասնությունը մասնակցել է ու քվեարկել դեպուտատին ետ կանչելու օգտին։ Դեպուտատին ետ կանչելու մասին Հայկական ՍՍՀ այժմ գործող օրենքը, որն ընդունվել է 10 տարի առաջ, սահմանում է, որ դեպուտատը ետ է կանչվում, եթե դրա օգտին քվեարկել է տվյալ ընտրական օկրուգի ընտրողների

---

35 Տե՛ս ՀՍԽՀ Սահմանադրությունը (Հիմնական օրենք), Երևան, 1922, հոդ. հոդ. 67, 68, 69 և ՀՍԽՀ Բանվորա-գյուղացիական կառավարության օրենքների կարգադրությունների ժողովածու, 1928, № 10։

36 См. А. А. Безуглов, Отчеты депутатов перед избирателями, «Советское государство и право», 1968, № 8, стр. 105.

37 Նպատակահարմար է թվում նման իրավունքով օժտել նաև սովետներին։ Պետք է ելնել այն հանգամանքից, որ դեպուտատը ոչ միայն տվյալ օկրուգի ընտրողների ներկայացուցիչն է, այլ և սովետի անդամ է։ Դեպուտատի գործունեության զգալի մասը ընթանում է սովետում, նրա մշտական հանձնաժողովներում և սովետի այլ մարմիններում, ուստի սովետը կարող է անհրաժեշտ (օրենքով սահմանված) դեպքերում ընտրողների քննարկմանը դնել այս կամ այն դեպուտատին ետ կանչելու հարցը։

մեծամասնությունը, մինչ դեռ ավելի ճիշտ կլիներ շեշտը դնել ետ կանչելու առթիվ անցկացված քվեարկությանը մեծամասնության մասնակցության վրա։

Վերոհիշյալ առաջարկությունների իմաստն այն է, որ դեպուտատներին ետ կանչելու կարգը համապատասխանեցվի նրանց ընտրությունների կարգին։ Թվում է, որ դրանց ընդունումը լրացուցիչ իրավական երաշխիք կհանդիսանան դեպուտատներին ետ կանչելու իրավունքը լրիվ օգտագործելու համար, կնպաստեն դեպուտատների գործունեության ակտիվացմանը, ընտրողների դերի բարձրացմանը։

ПРАВО ОТЗЫВА ДЕПУТАТОВ

Г. М. ХАЧАТРЯН

Резюме

Право отзыва депутатов избирателями является одним из важнейших принципов советской представительной системы. Это право отражает глубоко демократический характер взаимоотношений представительных органов и народа, депутатов и избирателей в советском государстве. Характерно, что право отзыва депутатов Советов возникло вместе с возникновением самих Советов.

В статье критикуются буржуазные концепции отношений депутатов и избирателей. Исследуется историческое развитие института отзыва депутатов, в частности, развитие законодательства об отзыве депутатов в Армянской ССР.

Характеристика современной практики осуществления отзыва депутатов дается, главным образом, на примерах отзыва депутатов Верховных Советов различных союзных республик.

На основании изучения соответствующего законодательного материала и источников, автором выдвигается ряд предложений, смысл которых заключается в том, что порядок отзыва депутатов Верховных Советов должен соответствовать порядку их избрания.